ՀԱՆԳԻՍՏ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀԱԿՈԲ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԿԵՊԵՆՅԱՆԻ

2002 թ. հուլիսի 12-ին, կյանքի 80-րդ տարում, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, ի Տեր հանգչավ Տ. Հակոբ ավագ քահանա Կեպենյանը:

Հանգուցյալ Տեր Հայրը ծնվել է 1922 թ. Թուրքիայի Բեյլան քաղաքում, բանվորի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի հայկական դպրոցում:

1939 թ. ընտանիքով տեղափոխվել են Լիբանան՝ Սուր քաղաք:

1949 թ. ընտանիքով ներգաղթել են Հայաստան և բնակություն հաստատել Լենինական քաղաքում, ուր մինչև 1966 թ. աշխատել է կահույքի գործարանում:

1966 թ. մասնակցել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի կրոնական և աստվածաբանական դասընթացներին: Նույն տարվա հունիս ամսին Ս. Սարգիս եկեղեցում, ձեռամբ Տ. Վահան եպս. Տերյանի, ձեռնադրվել է քահանա:

1966-1971 թթ. պաշտոնավարել է Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցում: Այնուհետև երջանկահիշատակ Վազգեն Ա-ի թույլտվությամբ տեղափոխվել է Լենինականի առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցի, ուր և պաշտոնավարել է մինչև 2000 թ.:

Ի գնահատումն իր անբասիր և բոլորանվեր ծառայության, Վազգեն Ա-ի տարբեր տարիների կոնդակներով Արժանապատիվ Տեր Հայրն արժանացել է լանջախաչ և ծաղկյա փիլոն կրելու իրավունքի և ավագ քահանայության պատվի:

Հուլիսի 14-ին, Երևանի Ս. Աստվածածին եկեղեցում մատուցված Ս. Պատարագի ժամանակ, կատարվեց հանգուցյալի վերջին օծման կարգը՝ ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի:

Արժանապատիվ Տեր Հայրը ավանդապահ և բարեխիղճ հոգևորական էր: Ուր էլ որ նա ծառայել է, վայելել է համայնքի և իրեն ճանաչողների սերն ու հարգանքը:

Թող Աստված երկնային խաղաղություն պարգևի հանգուցյալ Տեր Հոր հոգուն: